ՀՀ ԿԳՄՍ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

«ՍԻՍԻԱՆԻ ԱՎԱԳ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍՏԱՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ԴԱՍԸՆԹԱՑ 2023

ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

Թեմա՝ Տարիքային հոգեբանություն: Երեխաների սովորելու առանձնահատկությունները

Ուսումնական հաստատություն՝ Վաղատինի միջնակարգ դպրոց

Հետազոտող ուսուցիչ՝ Սահակյան Վարդուհի

Ղեկավար՝ Օֆիկ Առուստամյան

Բովանդակություն

Ներածություն _____ *2*

Գլուխ 1-ին Տարիքային հոգեբանություն _____ *4*

Գլուխ 2-րդ Երեխաների սովորելու առանձնահատկությունները _____ *7*

Փորձարարական մաս _____ *16*

Եզրակացություն _____ *19*

Գրականության ցանկ _____ *20*

Ներածություն

Հետազոտման արդիականությունը՝ Ընտրված թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ այս թեմայով ի ցույց ենք դնում աշակերտների սովորելու առանձնահատկությունները, որոնք հիմք են հանդիսանում կրթական որակի բարելավման համար: Ժամանակակից դպրոցի հիմնական խնդիրն է բացահայտել յուրաքանչյուր աշակերտի կարողությունները, դաստիարակել կյանքին պատրաստ անհատականություններ: Ավելին, կրթության հիմնական բնութագիրը ոչ միայն գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցումն է, այլև ստեղծագործական կարողությունների ձևավորումը, անընդհատ նորը սովորելու պատրաստակամությունը: Ուստի դրա համար կարևոր է բացահայտել սովորողների առանձնահատկությունները:

Հետազոտության նպատակը՝ Սույն աշխատանքի նպատակն է ներկայացնել տարիքային հոգեբանության ուսումնասիրման առարկան և մեթոդները, բացահայտել սովորողների այն առանձնահատկությունները որոնք նպաստում են գիտելիքների ձևավորմանը, որոնք կնպաստեն նրան որ աշակերտն ինքնուրույն կարողանա ստեղծել աշխարհի իմաստային պատկերը, կօգնի որոշումներ կայացնել անսովոր իրավիճակներում: Այդ առանձնահատկությունների շնորհիվ ինքնուրույն գտնել իրենց անհրաժեշտ գիտելիքը և օգտագործել այն:

Հետազոտության խնդիրները՝ Աշխատանքի նպատակին հասնելու համար մենք մեր առջև դրել ենք հետևյալ խնդիրները՝

- ✓ Ներկայացնել տարիքային հոգեբանության ուսումնասիրման առարկան և մեթոդները
- ✓ Ցույց տալ աշակերտների սովորելու առանձնահատկությունները
- ✓ Ներկայացնել կրտսեր դպրոցական տարիքի երեխաների հոգեբանամանկավարժական առանձնահատկությունները
- ✓ Բացահայտել այդ առանձնահատկությունների կարևորությունը կրթական գործընթացում

Գլուխ 1-ին Տարիքային հոգեբանություն

Տարիքային հոգեբանության զարգացումը համարում են 1787թ., Տիդեմանի գրած «Դիտարկումներ երեխայի հոգեկան հնարավորությունների մասին» գիրքը, բժիշկ Լեբիշի «Երեխայի հոգեկան զարգացումը» վերնագրով գիրքը: Սակայն տարիքային հոգեբանությունը որպես ինքնուրույն գիտություն առանձնացվելէ 1882թ., երբ ֆիզիոլոգ Բրեյերը գրեց «Երեխայի հոգին» աշխատությունը: Տարիքային հոգեբանությունն ուսումնասիրում է մարդու զարգացման գործընթացը ողջ կյանքի ընթացքում. սոցիալական հարաբերությունների համակարգը, վարքի կարգավորման նորագույն ձևերը, շրջապատող իրականության մեջ նրա կողմնորոշման տարբերակները, ինչպես նաև այն խնդիրը, թե որքանով է մարդն իր ներդրումն ունենում իր սեփական զարգացման ու կայացման գործում: Հասարակության սոցիալ-մշակութային զարգացման մակարդակով է պայմանավորված նրանում գործող երեխաների կրթության և դաստիարակության համակարգը:

Սոցիալական մերձավոր միջավայրից յուրաքանչյուր երեխա վերցնում է իրեն պիտանի որոշակի գիտելիքներ, հտություններ և կարողություններ: Բայց չպետք է մոռանանք, որ յուրաքանչյուր գիտելիք երեխան առավել հեշտ է յուրացնում որոշակի տարիքում. բարոյական նորմերը նախադպրոցական տարիքում: Պարզապես անհրաժեշտ է ուշադիր լինրել և բաց չթողնել երեխայի սենզիտիվ շրջանը և տալ երեխային այն, ինչ անհրաժեշտ է տվյալ փուլում: Համաձայն Վիգոդսկու, տվյալ շրջանում գործող որոշակի ներգործություններ կարող են շրջադարձային դառնալ երեխայի զարգացման ողջ ընթացքի վրա: Հոգեբանության այլ բնագավռներից տարիքային հոգեբանությունը տարբերվում է զարգացման ընթացքի, դինամիկայի շեշտադրումով: Տարիքային յուրաքանչյուր շրջափուլում տեղի ունեցող փոփոխությունները բաժանվում են 4 հիմնական ուղղությունների. ֆիզիկական աճ ու զարգացում, իմացական և խոսքային,անձնավորության զարգացում, սոցիալ-մշակութային զարգացում: Ֆիզիկական զարգացումը վերաբերում է մարդու մարմնի ձևին ու չափերին, զգայական կարողություններին և շարժողական հմտություններին: Կոգնիտիվ զարգացումն իր մեջ ներառում է ընկալման, մտածողության, ինչպես նաև լեզվի կիրառումը և այլ բարդ գործընթացների զարգացումը:

Անձնային զարգացումը ենթադրում է հարաբերականորեն կայուն և հաստատուն գծերի ձեռքբերում և սեփական անհատականության անկրկնելիության զարգացման ձևերը: Նախադպրոցականի, կրտսեր դպրոցականի, դեռահասի, պատանու հոգեբանությունը տարիքային հոգեբանության բաժիններն են: Տարիքային և մանկավարժական հոգեբանությունը անխզելի միասնություն են կազմում, քանի որ երեխային դիտում են ուսուցման դաստիարակության պրոցեսում, իսկ ուսուցումը և դաստիարակությունը չեն կարող դիտվել առանց իրենց օբյեկտի՝ երեխայի[1]: Տարիքային հոգեբանությունը ձգտում է բացահայտել օնտոգենեզի հաջորդական փուլերի հոգեբանական բովանդակությունը, հոգեկան պրոցեսների տարիքային դինամիկան: Այս ամենը ուսումնասիրելու հոգեբանության այս բաժինը պետք է հաշվի առնի մշակութային, պատմական, էթնիկական և սոցիալ-տնտեսական պայմանների ազդեցությունը մարդու անհատական զարգացման վրա: Տարիքային հոգեբանության համար էական նշանակություն ունեն անհայտ սեռատարիքային և տիպոլոգիական հատկություններն ու տարիքային տարբերությունները: Տարիքային հոգեբանությունը առաջնորդվում է ինչպես դետերմինիզմի, այնպես էլ հոգեկանի և գործունեության միասնության և գործունեության մեջ հոգեկանի զարգացման սկզբունքներով:

Առանց առաջատար գործունեության բովանդակության հոգեբանական վերլուծության հնարավոր չէ գաղափար կազմել տվյալ տարիքի հոգեկան զարգացման մասին: Տարիքային հոգեբանությունը լուծում է շատ կարևոր և գործնական խնդիրներ, որոնք վերաբերվում են կյանքի տարբեր ոլորտներին, ինչպիսիք են մանկավարժությունը, բժշկությունը, իրավաբանությունը, կառավարումը և այլն: Մանկավարժական հոգեբանությոնը ուսումնասիրում է մարդկանց ուսուցման ու դաստիարակության հոգեբանական օրինաչափությունները: Մանկավարժական հոգեբանությունը հենվում է հոգեբանության մի շարք այլ բնագավառների վրա՝ բայց առաջին հերթին տարիքային հոգեբանության նվաճումների վրա[2]: Տարիքային հոգեբանական գիտելիքները անհրաժեշտ են այն բոլոր մասնագետներին, որոնք շփվում և հարաբերվում են տարբեր տարիքի մարդկանց հետ: Նշված խնդիրները լուծելու համար տարիքային հոգեբանությունը օգտվում է անձի ուսումնասիրության տարբեր մեթոդներից: Տարիքային հոգեբանության գիտահետազոտական մեթոդները տարբեր են:

---

[1] Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977, էջ 7:
[2] Նալչաջյան Ա.Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Եր., 1991, էջ 34:

Տարիքային հոգեբանությունը օգտվում է փորձարարական մի քանի մեթոդներից. ինչպիսիք են դիտումը, գիտափորձը, գենետիկական մեթոդը երկայնական /լոնգիտյուդ/ և լայնական հետազոտությունների մեթոդները և այլն: Դիտումը հոգեբանության հնագույն մեթոդներից է, որը մինչև օրս էլ չի կորցրել իր գիտական նշանակությունը: Դիտման միջոցով կարելի է ուսումնասիրել երեխայի կամ ընդհանրապես մարդու վարքի այն դրսևորուները, որոնք ենթակա են արտաքին դիտման: Ի տարբերություն դիտման մեթոդի, գիտափորձի մեթոդի ությունը կայանում է նրանում որ, այստեղ կանծամտածված և նպատակաուղղված պայմաններ են ստեղծվում, որտեղ առավելագույնս կդրսևորվի և կգնահատվի ուսումնասիրվող երևույթը:

Գիտափորձի տեսակներն են՝ բնական, լաբորատոր, փաստող, ձևավորող: Ձևավորող գիտափորձի տեսակ է հոգեբանա-մանկավարժական գիտափորձը: Ըստ անցկացման վայրի՝ գիտափորձը լինում է. 1.բնական և 2.լաբորատոր: **Բնական գիտափորձի** պայմաններում երևույթներն ուսումնասիրվում են մարդու բնական կենսագործունեության շրջանակում: **Լաբորոտոր գիտափորձն** առաջին անգամ ուսումնասիրել է գերմանացի հայտնի հոգեբան Վունդտը, իսկ բնական գիտափորձը՝ Լազուրսկին 1910թ.: Լաբորատոր գիտափորձի ժամանակ ցանկացած հոգեբանական փաստ կարելի է ուսումնասիրել ցանկացած անգամ և ճշգրտորեն, քանի որ կիրառվում են սարքեր: Սակայն, այս դեպքում փորձարկվողը գիտի, որ իր նկատմամբ գիտափորձ է անցկացվում և լաբորատորիան իր սարքավորումներով, ուստի տվյալներն այդքան էլ օբյեկտիվ չեն լինում: Փոխարենը բնական գիտափորձի դեպքում ապահովվում է տվյալների, փաստերի օբյեկտիվությունը, սակայն, այս դեպքում էլ միևնույն հոգեբանական երևույթը նորից կրկնել հնարավոր չէ:

Արդի ժամանակաշրջանում ժամանակակից գիտությունների համակարգում կենտրոնական տեղ է գրավում տարիքային և մանկավարժական հոգեբանությունը: Տարիքային և մանկավարժական հոգեբանությունը սերտորեն կապված է փիլիսոփայության հետ: Եթե տարիքային հոգեբանությունն ուսումնսիրում է երեխայի հոգեկան զարգացումը կոնկրետ, ապա փիլիսոփայությունն ուսումնասիրում է մարդուն ամբողջապես: Անհերքելի է նաև տարիքային հոգեբանության կապը կենսաբանության և տարիքային ֆիզիալոգիայի հետ: Քանի որ յուրաքանչյուր հոգեկան գործընթաց ունի իր ֆիզիոլոգիական մեխանիզմները: Նշենք նաև, որ մանկական տարիքում յուրաքանչյուր հոգեկան փոփոխություն տեղի է ունենում ֆիզիոլոգիական մեխանիզմների առկայության դեպքում:

Գլուխ 2-րդ Երեխաների սովորելու առանձնահատկությունները

Երեխաների անհատական առանձնահատկությունները որոշվում են նյարդային համակարգի հատկություններով: Հետևաբար, ուսումնական գործընթացում չի կարելի հաշվի չնստել անհատապես տիպաբանական առանձնահատկությունների հետ և հաշվի չառնել դրանք: Անհատականությունը յուրաքանչյուր անձի ինքնատիպությունն է, որոշվում է իր հոգեբանության առանձնահատկությունների և հատկությունների ամբողջությամբ, որոնք ձևավորվում են տարբեր գործոնների ազդեցության տակ:

Կրթության մեջ անհատականության հաշվառումը նշանակում է յուրաքանչյուր աշակերտի առավելագույն զարգացման հնարավորության բացահայտում, նրա զարգացման սոցիալ-մշակութային իրավիճակի ստեղծում՝ ելնելով աշակերտի հոգեբանական առանձնահատկությունների յուրահատկության ճանաչումից և անկրկնելիությունից, տարբեր բնութագրերով աշակերտների տարբերություններից: Ուսուցիչը միշտ բախվում է դասավանդման ժամանակ տարբերակման հոգեբանական հիմքերը հասկանալու և ընտրելու խնդրին. անհատականության ո՞ր գծերը պետք է հաշվի առնել, ուղի ընտրելիս ո՞ր անձի վրա պետք է հույս դնել:

Ուսուցիչը, առաջին հերթին, պետք է հաշվի առնի սովորողների այնպիսի հատկանիշներ, որոնք ազդում են նրանց ուսումնական գործունեության վրա և որոնցից կախված են ուսուցման արդյունքները: Երեխաների անհատական առանձնահատկությունները որոշվում են նյարդային համակարգի հատկություններով: Հետևաբար, ուսումնական գործընթացում չի կարելի հաշվի չնստել անհատապես տիպաբանական առանձնահատկությունների հետ և հաշվի չառնել դրանք: Նյարդային համակարգի հիմնական հատկություններից առանձնանում են՝ ուժ, թուլություն և շարժունակություն, նյարդային համակարգի իներցիա: Ուժը բնութագրում է նյարդային համակարգի տոկունությունը, աշխատունակությունը, գրգռիչների նկատմամբ նրա կայունությունը: Թուլությունը նշանակում է ցածր աշխատունակություն, ծայրահեղ ուժեղ եւ կողմնակի խթանների նկատմամբ անկայունություն, բարձր զգայունություն: Շարժունակությունը որոշվում է հիմնական նյարդային գործընթացների արագության հատկանիշներով՝ գրգռում եւ արգելակում: Իներտ նյարդային համակարգ ունեցող մարդու մոտ նյարդային պրոցեսները դանդաղ են ընթանում:

Հոգեբանական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ այն դպրոցականները, ովքեր թույլ և իներտ են իրենց նեյրոդինամիկ բնութագրերով, ավելի վատ են սովորում, նրանք ավելի հաճախ դասակարգվում են որպես թերհաս և ցածր առաջադիմություն ունեցող: Բայց դա ամենևին չի նշանակում, որ թույլ և իներտ դպրոցականներն իրենց բնույթով նախապես դատապարտված են վատ առաջադիմության: Ուսումնական գործունեությունը, որպես ամբողջություն, չի կարող հատուկ պահանջներ դնել գենոտիպային հատկանիշների, մասնավորապես՝ ուսանողների նյարդային համակարգի հատկությունների վրա: Եվ գերազանցիկների մեջ հաճախ հանդիպում են դպրոցականները թույլ եւ իներտ նյարդային համակարգով: Այնուամենայնիվ, պետք է ընդունել, որ անհատական ուսուցման գործունեությունը և իրավիճակները հավասարապես դժվար չեն տարբեր տիպաբանական բնութագրեր ունեցող անհատների համար: Ուսումնասիրության մեջ հաջողությունը կամ ձախողումը կարելի է բացատրել ոչ թե առարկայի բնական հատկանիշներով, այլ հետևյալ գործոններով.

1. որքանով են ձևավորվել անհատական հնարքները և գործողությունների եղանակները՝ ուսումնական գործընթացի պահանջներին համապատասխան;
2. ինչպիսին են տիպաբանական հատկությունների անհատական դրսևորումները;
3. որոնք են ուսումնական գործընթացի կազմակերպման առանձնահատկությունները՝ որոնք կախված են ուսուցչից:

Նյարդային համակարգի տիպաբանական հատկությունները որոշելու համար առաջարկվում է հարցաշար,որը կազմվել է Յա. Ստեյաուի, Ա. Ի. Իլյինայի Ի.Մ. Պալեյի հարցաթերթիկների հիման վրա: Հարցաշարի միջոցով որոշվում են նյարդային համակարգի 4 հիմնական հատկությունները՝ նյարդային համակարգի ուժը բորբոքման, արգելակման, շարժունակության և հավասարակշռվածության վերաբերյալ:

Նյարդային համակարգի ուժի ցուցանիշները բորբոքման վերաբերյալ:

1. Պահպանում է բարձր աշխատունակությունը դասի ընթացքում:
2. Դասի վերջում չի նվազեցնում առաջադրանքների կատարման որակը:
3. Դասերից անմիջապես հետո լրացուցիչ աշխատանք կատարելու ունակություն:
4. Հակված չէ տրվելու հոգնածության առաջացող զգացողությանը:
5. Անտեսում է գործողությունների և շարժումների ճշգրտության վրա աշխատանքը:
6. Հանգիստ է նոր, անսպասելի միջավայրում:

7. Կարող է նորմալ գործել արտաքին միջամտության պայմաններում:
8. Ձգտում է մրցակցության:
9. Ստուգողական աշխատանքներում, մրցումներում ավելի լավ արդյունքներ է ցույց տալիս, քան սովորական պայմաններում:
10. Անհաջողությունների դեպքում չի մոլորվում, չի իջեցնում ձեռքերը:

Նյարդային համակարգի ուժի ցուցանիշները արգելակման վերաբերյալ:

1. Ունի հարթ խոսք և միատեսակ շարժումներ:
2. Համբերատար և համառ է աշխատանքային ինտենսիվ առաջադրանքների կրկնակի կատարման մեջ:
3. Պատրաստվում է դասի ուշադիր եւ չշտապելով:
4. Կշռում է բոլոր կողմ և դեմ, նախքան որոշում կայացնելը:
5. Հեշտությամբ հարմարվում է ընկերների աշխատանքի դանդաղ տեմպին, շարժումների տեմպին:
6. Շփման մեջ դյուրագրգռություն թույլ չի տալիս:
7. Անհրաժեշտության դեպքում կարող է արագ հանգստանալ:
8. Ստուգողականների և քննությունների օրերին կարողանում է պահպանել սովորական առօրյա ռեժիմը և նույնիսկ տրամադրությունը:
9. Քննությունից, ստուգողականից, հանրային ելույթից կամ մրցումներից առաջ ցույց չի տալիս զգալի հուզմունք:

Նյարդային համակարգի շարժունակության ցուցանիշները.

1. Շատ է խոսում ու ծիծաղում:
2. Արագ ծանոթություններ է հաստատում, ակտիվ է և հանգիստ է շփումների մեջ:
3. Աշխատում է առանց կուտակումների և հեշտությամբ փոխվում է առաջադրանքները փոխելիս:
4. Զգացմունքները հստակորեն արտացոլվում են դեմքի արտահայտությունների և ժեստերի մեջ:
5. Առաջադրանքները կատարելիս շտապում է:
6. Հեշտությամբ ներգրավվում են դասերի արձակուրդներից, ընդմիջումներից հետո:
7. Հեշտությամբ քնում և արթնանում է:
8. Չի նվազեցնում աշխատանքի որակը, երբ սահմանվում է դրա տեմպը, արագությունը բարձրացնելու անհրաժեշտությունը:

9. Սպասողական իրավիճակում նա անհանգիստ է, պտտվում է, նայում շուրջը:

Ուսումնական գործունեության համար կարևոր իմացական գործընթացներից է հիշողությունը: Աշակերտին անհրաժեշտ է մտապահել մեծ քանակությամբ ինֆորմացիա և վերարտադրել այն: Չտիրապետելով հատուկ հմտությունների, երեխան հիշում է մեխանիկորեն, սակայն մեծ քանակի նյութի մտապահման դեպքում դա հետզհետե դժվարանում է: Ուսուցիչը օգնում է երեխային կիրառել մտապահման որոշակի հմտություններ՝ իմաստավորված մտապահում /իմաստային տարրերի բաժանում, իմաստային խմբավորում, համեմատություն և այլ/ և վերարտադրման հնարներ: Երեխան սկզբնական փուլում դժվարանում է մտապահվող նյութի մեջ իմաստային տարրեր առանձնացնել, ինչը անհրաժեշտ է հմտացնել սկսած տարբեր նկարների և փոքր տեքստերի մտապահման գործընթացից:

Ուսումնական գործընթացը, գիտելիքների, հմտությունների, կարողությունների ձեռքբերումը ենթադրում է աշակերտի ինքնակառավարում, ինչը հնարավոր է իրականացնել լավ զարգացած կամածին ուշադրության դեպքում: Ուսման սկզբնական շրջանում երեխային գրավում է երևույթների միայն արտաքին կողմը, իսկ ուսուցչի դերը կայանում է նրանում, որ պարբերաբար սովորեցնի դիտողականությանը, երևույթների էության ըմբռնմանը, հասկացմանը և այլն: Նպատակահարմար է, օրինակ, խնդրել երեխային ստուգել իր ընկերոջ կամ իր գրածը, համեմատել սկզբնական նյութի հետ, զննել և մտապահել առարկաների կորևոր բնութագրերը և այլն: Ուսումնական գործունեության ընթացքում մեծահասկաների օգնությամբ երեխայի մոտ զարգանում են ուշադրության բաշխումը և տեղափոխելիությունը:

Այս տարիքում առաջնային պլան է մղվում մտածողության զարգացումը: Այն դառնում է առավել տրամաբանական, ինքնուրույն, ճկուն: Առաջին տարիներին այն դեռևս պատկերավոր բնույթ է կրում, սակայն ուսումնական գործունեությունը ստիմուլացնում է վերացական մտածողության զարգացումը, երբ հստակ արտաքին առարկաների հետ գործ ունենալուց երեխան անցում է մտավոր պլանում գործողությունների կատարմանը: Կարևոր դեր են խաղում գիտական հասկացությունների ձևավորումը, որն ընթանում է ֆունկցիոնալ հատկանիշների առանձնացումից մինչև էական հատկանիշների առանձնացումը: Գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները: Այս հասակը երեխայի համար

շրջադարձային փուլ է, քանի որ նրա կյանքում առաջատար գործունեություն է դառնում ուսումը:

Դպրոցական տարիքում խաղը չի անհետանում, այն իր ներքին շարունակությունն է գտնում ուսուցման մեջ և աշխատանքում: Այս տարիքում էական փոփոխություններ են կատարվում մարմնի բոլոր օրգաններում, ձևավորվում են ողնաշարի բոլոր երեք կորացումները՝ պարանոցային, կրծքային, գոտկային, բայց կմախքի ոսկրացումը չի ավարտվում, և կարևոր է հետևել ճիշտ կեցվածքի ձևավորմանը: Զարգանում է գլխուղեղի մեծ կիսագնդերի գործունեությունը, ուղեղի քաշն ավելանում է 200 գրամով՝ 1200-ից հասնելով 1400-ի, որը հասուն մարդու ուղեղի քաշի 90%-ն է: Հատկապես աճում են ուղեղի ճակատային բաժինները, որոնք մեծ դեր են խաղում հոգեկան գործունեության բարձրագույն և առավել բարդ գործառույթների ձևավորման գործում:

Կրտսեր դպրոցական տարիքը ճանաչողական գործունեության ակտիվացման փուլ է, նրանք ունեն վառ պատկերացումներ և երևակայություն, որը պետք է խրախուսվի: Պետք է օգտագործել երեխաների բոլոր զգայարանները՝ հմտորեն զուգակցելով ուսումը, խաղը և աշխատանքը:Դպրոց ընդունվելու հետևանքով երեխայի մեջ առաջանում են հոգեբանական նոր վիճակներ: Նա դադարում է պարզամիտ և անմիջական լինելուց, շրջապատի համար դառնում է անհասկանալի: Նա գիտակցում է իր սոցիալական 'ես'-ը, ձևավորվում է ներքին սոցիալական դիրքորոշումը: Նույնիսկ դրսևորում է հակասական վարք. դպրոցում կազմակերպված ու ինքնուրույն են, տանը՝ կամակոր ու անհաշտ: Այս տարիքում ձևավորվում են երեխայի տարաբնույթ գործունեության և վարքի նոր մեխանիզմներ, ձևավորվում են դրդապատճառային կայուն կառույցներ: Երեխաները կամենում են լինել ուշադրության կենտրոնում, սկսում են կատարել 'լուրջ' պարտականություններ, ձգտում են առաջինը լինել: Միայն սեփական գործունեության արդյունքում է երեխան իր համար բացահայտում հաղորդակցման ձևերի հնարավոր բոլոր տարբերակները[3]: Նրանք դպրոց են գնում նորի սպասելիքով, գիտակցում են իրենց տեղը շրջապատում, ձևավորվում է իր վարքը շրջապատին համապատասխանեցնելու ձգտում, գնահատում են հաջողությունները և դրսևորում համարժեք վարք: Այդ պատճառով էլ ուսուցիչը պետք է աջակցի երեխային և զարգացնի բուն գիտելիքների կարևոր ու արժեքավոր լինելու

[3] Кулагина И.Ю. “Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет М. 1999, էջ 253:

ըմբռնում՝ դասավանդվող առարկաների անսպասելի և գրավիչ կողմերի ակնառու ցուցադրմամբ:

Սա կնպաստի ուսումնական գործունեության հիմքը հանդիսացող իմացական հետաքրքրությունների ձևավորմանը: Ուսումնական գործընթացում անհրաժեշտ է, որ ուսուցիչը սիստեմատիկորեն երեխաներին ներգրավի ուսումնական իրադրությունների մեջ, իսկ աշակերտը իր հերթին պետք է յուրացնի, վերարտադրի բոլոր գործողությունները: 1-2 դասարաններում երեխաները գործում են ուսուցչի ուղղակի ցուցումների հիման վրա, իսկ 2-րդ դասարանի վերջում և 3-ում աշակերտները առանձին տարրեր կատարում են ինքնակարգավորման հիման վրա: Նրանք կարողանում են որոշել, թե այս կամ այն գործնական խնդիրները լուծելու ինչպիսի հնարավորություններ ունեն: Կրտսեր դպրոցականի մտածողությունը պատկերավոր է, առարկայական, կոնկրետ, գծային, գունային, աստիճանաբար զարգանում է կերպարային հիշողությունը. նա դյուրին է ընկալում այն, ինչ կապված է իր կենսափորձի հետ, ինչ տեսել է, զգացել, կատարել: Այդ պատճառով ուսումնական գործընթացում անհրաժեշտ է որքան հնարավոր է օգտագործել խաղային տեխնոլոգիաներ:

Չպետք է մոռանալ, որ սոցիալական նոր՝ աշակերտի դերի հետ 6-7 տարեկան երեխայի օրգանիզմի հարմարումը, ուսումնական ռեժիմին ընտելացումը հաճախ ուղեկցվում են քնի և ախորժակի խանգարմամբ, ցրվածությամբ, աշխատունակության անկմամբ: Այս իմաստով պետք է դասը հաճախակի ընդմիջել ֆիզկուլտ դադարներով, դիդակտիկ և շա րժուն խաղերով, երգերով, պարերով, հետաքրքիր զբաղմունքներով: Կրտսեր դպրոցական տարիքում ինտենսիվ զարգանում և հարստանում է երեխայի խոսքը: Ուսուցիչը կարող է օժանդակել այս գործընթացին՝ ապահովելով հարուստ խոսքային միջավայր /գրքերի ընթերցում, ֆիլմերի դիտում, խոսքի ունկնդրում/, ստեղծելով դասաժամերին արտահայտվելու և շփվելու հնարավորություններ, ձևավորելով բավարար բառապաշար, ձևավորելով գեղեցիկ խոսք օգտագործելու պահանջմունք և այլ: Այս տարիքում նաև ձևավորվում է գրավոր խոսքը, որը բավականաչափ ծանր, երկարատև և կամային ճիգեր պահանջող գործունեություն է:

Այսպիսով, կարելի է փաստել, որ կրտսեր դպրոցական տարիքում երեխաները ունենում են հետևյալ առանձնահատկությունները՝

- իմացական ոլորտի զարգացում

- աֆեկտիվ-պահանջմունքային նոր մակարդակի ձևավորում, ինչը թույլ է տալիս գործել ոչ թե անմիջականորեն, այլ առաջնորդվելով հստակ գիտակցված նպատակներով, բարոյական նորմերով և արժեքներով;
- հարաբերականորեն կայուն վարքաձևերի ձևավորում
- երեխայի սոցիալական ուղղվածության զարգացում:

21-րդ դարի կրտսեր դպրոցականները զգալիորեն տարբերվում են անցյալի դարի իրենց հասակակիցներից: Դպրոցին պատրաստվածության շրջանակը շատ լայն է՝ թվերի տառերի լիակատար չիմացությունից, տարածական կողմնորոշման, տարրական հմտությունների բացակայությունից մինչև սահուն կարդալու, կարդացածը համեմատելու և ընդհանրացնելու, պարզագույն խնդիրներ լուծելու ունակություն: Այնուամենայնիվ այսօրվա երեխաները դեռևս դժվարություններ է ունենում ինքնադրսևորման, ինքնակողմնորոշման և ինքնակազմակերպման հարցերում: Հենց այս խնդրի առկայություն է խթան հանդիսանում ուսուցման ոճերում առաջնահերթությունները փոխելու և անկախության ձևավորման վրա կենտրոնանալու գործում, քանի որ երեխայի՝ առանց մեծահասակի օգնության ուսումնական գործունեություն իրականացնելու կարողությունը կլուծի նրա անհատական ուսուցման մի շարք խնդիրներ և կընդլայնի նրա հեռանկարները:

Հոգեբանական և մանկավարժական հետազոտությունները ցույց են տալիս, որ աշակերտի անհատականության ձևավորումը և նրա զարգացման առաջընթացն իրականացվում են ոչ թե պատրաստի գիտելիքի ընկալման ժամանակ, այլ նոր գիտելիքների բացահայտմանն ուղղված սեփական գործունեության ընթացքում[4]: Առաջին անգամ ուսուցման հմտությունների ձևավորման ծրագիրն առաջարկվել է Բ. Էլկոնինի կողմից և մշակվել նրա աշակերտներ Վ.Դավիդովի, Վ.Ռեպկինի, Գ.Ցուկերմանի կողմից: Ժամանակակից կրթական համակարգի ամենակարևոր խնդիրը համընդհանուր կրթական գործունեության ձևավորումն է, որը սովորողներին տալիս է սովորելու կարողություն, ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողություն: Շատ կարևոր է կրտսեր դպրոցականի «անձնավորության» ձևավորումը, ինչը կապված է մոտիվների և ինքնագիտակցության հետ, շարունակում է իր զարգացումը կրտսեր դպրոցական տարիքում: Սակայն կրտսեր դպրոցականը, ի տարբերություն նախադպրոցականի, իր գործունեության մեջ է ներառում նաև ուսումը, որի արդյունքները գնահատվում են մեծահասակների կողմից: Դպրոցական առաջադիմությունից, երեխայի լավ կամ վատ սովորելու արդյունքում ստացած գնահատականից է կախված նրա

[4] Бесова, М. А., Педагогические технологии в начальной школе / 2003. – 180 с.

անձնավորության զարգացումը: Մոտիվացիոն ոլորտը, ինչպես կարծում է Ա.Ն. Լեոնտևը, անձնավորության միջուկն է: Ի՞նչն է երեխային առաջ մղում, որո՞նք են նրա ցանկությունները:

Երեխայի ուսման սկզբում, ունենալով աշակերտի ներքին դիրքորոշում, նա ցանկանում է սովորել: Նույնիսկ լավ սովորել, գերազանց: Ուսուցման սոցիալական մոտիվներից, երևի թե, ամենագլխավորը բարձր գնահատականներ ստանալն է: Բարձր գնահատականը կրտսեր դպրոցականի համար այլ խրախուսանքների աղբյուր է, նրա հուզական բարեկեցության պայմանը, հպարտության առարկան: Երբ երեխան լավ է սովորում, նրան գովում են և՛ ծնողները, և՛ ուսուցիչը: Ավելին, դասարանում, որտեղ ուսուցչի դերը ոչ միայն որոշիչ, այլև միակ հեղինակությունն վայելող կարծիքն է, որի հետ բոլորը հաշվի են նստում, վարձր գնահատականը ապահովում է համապատասխան կարգավիճակ:

Տարրական դպրոցում երեխաների ուսուցման հիմնական արդյունքներն են՝

- սովորելու ունակության զարգացումը,
- կրթական խնդիրները լուծելու համար ինքնակազմակերպվելու
- ունակությունը, անհատական առաջադիմություն անձնական զարգացման հիմնական ոլորտներում,

Նախադպրոցական և տարական կրթությունը հետագա բոլոր կրթությունների հիմքն է: Այս շրջանում է հիմք դրվում համընդհանուր կրթական գործունեության ձեւավորմանը և զարգացմանը: «Ուսուցման համընդհանուր գործունեություն» տերմինը նշանակում է սովորելու կարողություն, այսինքն. սուբյեկտի ինքնազարգացման և ինքնակատարելագործման կարողությունը նոր սոցիալական փորձի գիտակցված և ակտիվ յուրացման միջոցով: Ուսուցման համընդհանուր գործողությունները, որպես ընդհանրացված 8 գործողություններ, հնարավորություն են տալիս սովորողներին ունենալ լայն կողմնորոշում ինչպես տարբեր առարկայական ոլորտներում, այնպես էլ բուն ուսումնական գործունեության կառուցվածքում, ներառյալ նպատակային կողմնորոշման, արժեքային-իմաստային և գործառնական բնութագրերի գիտակցումը:

Սովորելու ունակության ձեռքբերումը ներառում է ուսանողների կողմից ուսումնական գործունեության բոլոր բաղադրիչների ամբողջական զարգացումը, որոնք ներառում են.

- ճանաչողական և կրթական դրդապատճառներ,

- ուսումնական նպատակ,
- ուսումնական առաջադրանք,
- ուսումնական գործունեություն և գործառնություններ (կողմնորոշում, նյութի փոխակերպում, վերահսկում և գնահատում):

Ժամանակակից ուսուցիչը ոչ միայն տալիս է երեխային գիտելիքներ, այլև սովորեցնում է ինքնուրույն գտնել այդ գիտելիքները և ինքնուրույն կարողանալ բարձրացնել սեփական գիտելիքների և հմտությունների մակարդակը: Հայտնի ռուս մանկավարժ Նիկոլաևան առաջարկում է կրտսեր սովորողների մոտ սովորելու կարողության ձևավորման հետևյալ փուլերը[5]: «Նախ երեխան գնահատում է առաջադրանքը, ծանոթանում դրա ձևակերպմանը, կապում այն այս կամ այն ոլորտի հետ (առաջադրանքները կարող են լինել ոչ միայն թվաբանական), խնդրին և ներկայացնում հնարավոր լուծումները: Հաջորդ քայլը կլինի առաջադրանքի հետ կապված սեփական հնարավորությունների գնահատումը: Երրորդ փուլում պլանավորում է որոշակի գործողությունների կատարում, անհրաժեշտ ժամանակի հաշվարկում այդ գործողությունների կատարման համար: Խնդրի լուծման փուլերի մոնիտորինգ և վերջնական արդյունքի որակի վերահսկում:

Տարրական դպրոցում կարելի է առանձնացնել հետևյալ կարգավորող ուսումնական գործողությունները, որոնք արտացոլում են տարրական դպրոցական տարիքի երեխաների առաջատար գործունեության բովանդակությունը. նպատակներին հասնելու նպատակասլացության և հաստատակամության ձևավորում, կյանքի լավատեսություն, դժվարությունները հաղթահարելու պատրաստակամություն: Այսպիսով, նպատակադրումը, պլանավորումը, գործողությունների մեթոդների յուրացումը, ալգորիթմների յուրացումը, սեփական գործունեությունը գնահատելը կարգավորող ունիվերսալ ուսումնական գործունեության հիմնական բաղադրիչներն են, որոնք հիմք են դառնում ուսումնական գործունեության համար: Տարրական դպրոցում երեխաների ուսուցման հիմնական արդյունքներն են գործողության համընդհանուր մեթոդների ձևավորումը, սովորելու կարողությունը՝ կրթական խնդիրները լուծելու համար ինքնակազմակերպվելու ունակությունը, անհատական առաջընթացը անձնական զարգացման հիմնական ոլորտներում՝ հուզական, ճանաչողական: Սովորելու արդյունքում երեխայի մոտ պետք է զարգանա սովորելու ցանկություն և

[5] Бесова М. А., Педагогические технологии в начальной школе /, 2003. – 180 с

կարողություն, նախաձեռնողություն, անկախություն, տարբեր գործունեության մեջ համագործակցելու հմտություններ:

Հենց առաջին դասարանում երեխաների մոտ սկսվում է ձևավորվել ուսումնական գործունեության մասին պատկերացումնումները: Սովորողները գիտակցում են, թե ի՞նչ է նշանակում սովորելու կարողունակությունը: Կրտսեր աշակերտները սովորում են հաղթահարել ուսումնական գործունեության դժվարությունները, նպատակ դնել, սեփական ուժերով կառուցել նպատակին հասնելու ճանապարհ: Աշակերտները սովորում են հետևել հրահանգներին: Տարրական դպրոցում երեխաների մոտ ձևավորովում է ինքնակարգավորումը, երեխաները կարողանում են կառավարել սեփական գործողությունները, դա ցանկացած գործունեության հաջողության հիմքն է:

Սովորելու արդյունքում երեխայի մոտ պետք է զարգանա՝ սովորելու ցանկություն և կարողություն, նախաձեռնողականություն, անկախություն, տարբեր գործունեության մեջ համագործակցելու հմտություններ: Այդ իսկ պատճառով այսօր կրտսեր դպրոցի ուսուցիչը պետք է վերանայի է իր ուսուցման փորձը և կենտրոնանա այն հարցերի վրա, ինչպիսին՝ ինչպե՞ս սովորեցնել երեխաներին, ինչպե՞ս զարգացնել սովորելու կարողությունը: «Սովորելու կարողություն» հասկացությունը ներառում է ոչ միայն տեղեկատվության յուրացում, այլև սովորածի իմաստը հասկանալու, գիտելիքները պլանավորելու և կիրառելու ունակության զարգացում ոչ միայն կրթական գործունեության մեջ, այլև ցանկացած իրավիճակում: Ուստի ուսուցիչը սովորեցնում է աշակերտներին ոչ միայն մտածել, այլ նաև ինչպես արդյունավետ մտածել, ինչ ռազմավարություններ ընտրել որոշակի խնդրի լուծման համար: Այսպիսով կարող ենք վստահորեն առաջ քաշել այն հաղափարը, որ կրտսեր դպրոցականի ուսումնական գործընթացում, առավել կարևոր է սովորելու առանձահատկությունների բացահայտումը: Պետք է ուշադրությունը կենտրոնացնել սովորողի հոգեբանական, անհատական և տարիքային առանձնահատկությունների վրա:

Փորձարարական մաս

Սույն հետազոտական աշխատանքի շրջանակում մենք իրականացրել ենք հարցում պարզելու համար որոնք են երեխաների սովորելու առանձնահատկությունները: Հարցումը իրականացրել ենք ուսուցիչների, ծնողների շրջանակներում: Ուսուցման գործընթացի կարևորությունը կայանում է նրանում թե ինչ սովորելու առանձնհատկություններ ունեն աշակերտները, ինչն է նրանց գրավում ուսուցման գործընթացում: Այսպիսով մենք իրկանացրել ենք հարցում ուսուցիչների շրջանակում, հարցը ձևակերպված էր հետևյալ կերպ՝ Ո՞ր առանձնահատկությունն է կարևոր կրտսեր դպրոցականի կրթությունը իրականացնելու համար:



Հարցման արդյուքնում ունեցանք հետևյակլ արդյունքը: Ուսուցիչների մեծամասնությունը 48 %-ը կարևորում է հոգեբանական առանձնահատկությունները, և կատարում է անհատական մոտեցում յուրաքանչյուր աշակերտի հետ: 28%-ը կարծում է որ ավելի կարևոր է հաշվի առնել տարիքային առանձհատակությունը: Մյուս հատվածը կողմնակից է անհատական առանձահատկությանը, պատճառաբանելով, որ յուրաքանչյուր երեխա անհատ է, և պետք է նրանց անհատական մոտեցում ցուցաբերեն:

Հաջորդիվ իրականացրել ենք հարցում ծնողների շրջանակում փորձելով պարզել ուսումնական գործընթացում արդյոք հաշվի է առնվում, տարիքային, հոգեբանական, և անհատական առանձնահատկությունները:



Հարցման արդյունքում ունեցանք հետևյալ արդյունքը՝ 45 %-ը հավաստում է որ հաշվի են առնվում կրտսեր դպրոցականի թե՛ անհատական և թե՛ հոգեբանական ու տարիքային առանաձնահատկությունները, 30 %-ը կարծում է որ մասմաբ է այն իրականացվում և կան բացթողումներ: 25 %-ի կարծիքով հաշվի չի առնվում վերը նշված առանձնահատկությունները: Վերջնական եզրահանգում կատարելիս կարելի է ասել, որ կրտսեր դպրոցականի դպրոց մուտք գործելուն պես ուսուցիչը ոչ միայն փոխանցում է գիտելիքներ այլ նաև հաշվի է առնում սովորողի սովորելու առանահատկությունները, որը կրթության բարելավման կարևորագույն փաստն է: Տարրական դպրոցի ուսուցչի խնդիրն է, առաջին հերթին, «բացել երեխայի սիրտը», նրա մեջ արթնացնել նոր նյութ սովորելու ցանկություն, սովորել, թե ինչպե աշխատել դրա հետ: Ուսուցիչը պետք է լավ տեղյակ լինի տարրական դպրոցական տարիքի երեխաների հոգեբանական առանձնահատկություններին, կարողանա հասկանալ յուրաքանչյուր երեխայի անհատական առանձնահատկությունները և գտնել ուսուցման և կրթության համապատասխան մեթոդներ, ճանաչողական մոտիվացիայի ձևավորում:

Եզրակացություն

Աշխատանքի ավարտին մենք հանգել ենք հետևյալ եզրահանգումներին՝

1. Կրտսեր դպրոցական տարիքը ամենակարևոր շրջանն է անձի կայացման և զարգացման համար, այն կախված է երեխային շրջապատող ֆիզիկական և սոցիալական միջավայրից, դրանք են ընտանիք, դպրոց, ընկերներ: Կրտսեր դպրոցական տարիքում երեխան արդեն ունակ է ճանաչելու առարկաների նմանությունը և տարբերությունը, ելնելով նրանց առանձնահատկություններից:
2. Կրտսեր դպրոցում պետք է ստեղծել այնպիսի միջավայր, որտեղ կզարգանան սովորողների դեռևս նոր ձեռք բերած անձնային հատկանիշները՝ ինքնուրույնություն, ինչ-որ նոր բան սովորելու հակում, հետաքրքրասիրություն:
3. Կրտսեր դպրոցականի մոտ պետք է նախապես ձևավորել որոշակի դիրքորոշում դպրոցական դառնալու, դպրոցում սովորելու նկատմամբ դպրոցում սովորելու համար երեխայից պահաջվում է մտավոր, հուզական և սոցիալական զարգացվածության որոշակի մակարդակ: Կրտսեր տարիքը կարևորագույն շրջան է անձի կայացման և բնականոն զարգացման համար գիտական հասկացությունների ձևավորման գործընթացում զարգանում են երեխայի մտածողության բոլոր գործընթացները:
4. Ներկա ժամանակաշրջանում ուսուցչի հիմնական խնդիրը պետք է կայանա այն, որ պետք է նա բացահայտի յուրաքանչյուր աշակերտի կարողությունները, դաստիարակել կյանքին պատրաստ անհատականություններ այսօրվա մրցունակ: Ավելին, կրթության հիմնական բնութագիրը ոչ միայն գիտելիքի և տեխնոլոգիաների փոխանցումն է, այլև ստեղծագործական կարողությունների ձևավորումը, անընդհատ նորը սովորելու պատրաստակամությունը: Ժամանակակից տեղեկատվական հասարակության մեջ ոչ այնքան գիտելիք է անհրաժեշտ, որքան այն ձեռք բերելու կարողություն և ինքնուրույն կիրառելու կարողություն:

Գրականության ցանկ

1. Նալչաջյան Ա.Ա., Ընդհանուր հոգեբանության հիմունքներ, Եր., 1991:
2. Պետրովսկի Ա.Վ., Տարիքային և մանկավարժական հոգեբանություն, Եր., 1977:
3. Бесова, , М. А. Педагогические технологии в начальной школе / 2003:
4. Кулагина И.Ю. “Возрастная психология: развитие ребенка от рождения до 17 лет М. 1999: